

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՇՈՏԻ

**ԱԼԵՎԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Ռ. Ա. Սաֆրաստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Ա. Ա. Խառատյան

պատմական գիտությունների թեկնածու՝
Ա. Դ. Դումանյան

Առաջատար կազմակերպություն՝


Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011թ. դեկտեմբերի 5-ին, ժ. 15:30-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՒՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2011թ. նոյեմբերի 4-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝



պ.գ.թ. Ռ.Պ. Ղազարյան

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ալևիների խնդրի ուսումնասիրությունը գիտական կարևոր նշանակություն ունի Թուրքիայի պատմության ընթացքում տեղի ունեցած մի շարք իրադարձությունների և ներկայումս շարունակվող քաղաքական գործընթացների, ինչպես նաև վերջին շրջանում Եվրոպական միություն-Թուրքիա հարաբերությունների համատեքստում թուրքական կառավարության կողմից կատարվող որոշ քայլերի էությունը լավագույնս հասկանալու համար: Հատկապես կարևորվում է ալևիների խնդրի ուսումնասիրությունը արդի փուլում՝ հնարավորություն տալով ավելի լավ պատկերացնելու, թե ինչ պատճառով են դրանք մնում ցայսօր չլուծված: Մասնավորապես ուշադրության է արժանի այն փաստը, որ ալևի հասարակությունը վերջին երկու տասնամյակների ընթացքում սկսել է համախմբվել և, առաջնորդվելով ալևիական մի շարք հեղինակավոր կազմակերպությունների կողմից, ընտրել պայքարի որոշակի ուղի՝ երկրի կառավարությանը ներկայացնելով մի շարք պահանջներ, ակտիվորեն կազմակերպելով հանրահավաքներ և այլ միջոցառումներ: Այս գործընթացում մեծ է XX դարի երկրորդ կեսին սկսված արտագաղթի արդյունքում Գերմանիայում և եվրոպական մի շարք երկրներում ձևավորված ալևիական միությունների դերը, որոնք հնարավորինս աջակցում են Թուրքիայում գործող ալևիական կազմակերպություններին և որոշ դեպքերում նաև ֆինանսական օգնություն ցուցաբերում նրանց:

Ատենախոսության մեջ, որպես պատմական ակնարկ, անդրադարձ է կատարվում նաև Օսմանյան կայսրության շրջանում քվրաշական ապստամբությունների խնդրին, ինչպես նաև այն տեսակետին, որ ալևիականությունն առաջացել է ոչ թե իսլամից անջատման արդյունքում, այլ ձևավորվել է երկար տարիների ընթացքում քրիստոնեության, այդ թվում նաև քրիստոնեական աղանդների, իսլամի և շամանականության միախառնման արդյունքում: Դրանով է բացատրվում ալևիականության հավատամքում և ծեսերում վերոնշյալ կրոնական ուղղությունների տարբեր տարրերի գոյության փաստը: Սակայն այս թեման, լինելով առանձին ուսումնասիրության նյութ, խորապես չի քննվում, այլ ուղղակի ներկայացվում է՝ հետագա իրադարձություններն ու երևույթները լավագույնս հասկանալու համար:

Հետագուտվող թեման առաջին հերթին կարևոր է Օսմանյան կայսրության փլուզումից հետո երկրում ծավալված իրադարձությունների ընթացքում ալևիների դիրքի, ինչպես նաև Մուստաֆա Քեմալի ղեկավարած ազգայնական շարժմանը ալևի առաջնորդների աջակցության պատճառների ուսումնասիրման տեսանկյունից: Ալևիները, մինչև քաղաքական բեմում քեմալականների երևան գալը, դարեր շարունակ վարել են ներհամայնքային փակ կենսակերպ՝ հնարավորինս խուսափելով արտաքին աշխարհի, մասնավորապես սուննիականություն դավանող մուսուլմանների հետ շփումից, իսկ անհնարինության պարագայում թաքցրել են իրենց կրոնական ինքնությունը՝ կիրառելով «թաքիա» իսլամական ինստիտուտը, համաձայն որի՝ թույլատրվում է թաքցնել կրոնական և քաղաքական իրական համոզմունքները, եթե

դրանց բացահայտումը վտանգ է պարունակում տվյալ անձի համար: Սակայն Քեմալի՝ աշխարհիկ պետություն հիմնելու վերաբերյալ խոստումները, որոնք ի կատար ածելու դեպքում ալևիները վերջապես կձերբազատվեին սուննիների ճնշումներից, ալևիների շրջանում հույսեր արթնացրին և համակրանք առաջացրին ազգայնականների շարժման առաջնորդի նկատմամբ, սակայն դրանք աստիճանաբար վերացան հաջորդող տարիների ընթացքում՝ քեմալականների կողմից իրականացվող մի շարք գործողությունների հետևանքով: Այս իրողությունը, հետագայում նաև Գերսիմում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում կառավարական ուժերի կողմից քուրդ ալևիների նկատմամբ դաժան հալածանքները սկիզբ դրեցին ալևիների նկատմամբ թուրքական պետության իրականացրած մերժողական քաղաքականությանը՝ բազմակուսակցական համակարգի առաջացումից հետո նրանց մղելով ձախակողմյան սոցիալիստական ուժերի գիրկը:

1960-ական թվականներից սկսված ուրբանիզացման, ինչպես նաև դեպի եվրոպական երկրներ ուղղված արտագաղթի երևույթները նշանակալի ազդեցություն ունեցան ինչպես ալևիականության որոշ սկզբունքների ձևափոխման, այնպես էլ ալևիական նոր շարժման ձևավորման վրա, որի նպատակը դարձավ Թուրքիայի կառավարության կողմից ալևիների իրավունքների և ընդհանրապես ալևիականության՝ սուննի իսլամից առանձին կրոնի ճանաչումը:

Ուսումնասիրվող թեման արդիական է այն առումով, որ այսօր շարունակվում և էլ ավելի է հզորանում ալևիական շարժումը թե՛ Թուրքիայում և թե՛ եվրոպական մի շարք երկրներում: Աշխատությունում մեծ տեղ է հատկացվում շարժման արդի փուլին, վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությանը, ինչի շնորհիվ լուսաբանվում են Թուրքիայում ալևիական շարժման հանգամանքները, ներկայացվում և վերլուծվում են կառավարության կողմից ալևիական խնդիրների լուծմանն ուղղված առաջին քայլերը:

Անդրադարձ է կատարվում նաև եվրոպական մի շարք երկրներում բնակվող ալևիներին, ներկայացվում է նրանց ստեղծած միությունների դերը ալևիական շարժման զարգացման գործում, քանի որ դրանք, ի տարբերություն աշխարհի մյուս երկրներում գործող ալևիական միությունների՝ ամենակազմակերպվածն են և ակտիվորեն մասնակցում են ալևիական շարժման հետ կապված՝ Թուրքիայում տեղի ունեցող գրեթե բոլոր գործընթացներին: Այս առումով չափազանց մեծ է, մասնավորապես, Գերմանիայում գործող ալևիական կազմակերպությունների դերը:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է Թուրքիան հանրապետություն հռչակվելուց ի վեր ալևիների պատմության, ժամանակակից փուլում ալևիական շարժման համակողմանի ուսումնասիրման ու լուսաբանման անհրաժեշտությամբ՝ նպատակ ունենալով քննել ալևիականության խնդիրը հանրապետական Թուրքիայում, համառոտ կերպով ներկայացնել ինչպես ալևիների

պատմությունը Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում, այնպես էլ XX դարում Եվրոպայում ձևավորված համայնքների գործունեությունը: Նկատի ունենալով ուսումնասիրվող թեմայի լայն ու բազմակողմանի բնույթն ու ընդգրկունությունը՝ աշխատանքը սահմանափակվում է բացառապես հետևյալ խնդիրների առաջադրմամբ.

- Համառոտ ներկայացնել ալևիների պատմությունը՝ առաջացման շրջանից մինչև Օսմանյան կայսրության անկումը՝ ներառելով ալևիականության ձևավորման վերաբերյալ գիտական աշխարհում շրջանառվող հիմնական տեսակետները, նախադրյալները և հանգամանքները՝ օսմանյան շրջանում տեղի ունեցած իրադարձությունների համատեքստում:

- Լուսաբանել Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայում սկսված ազգայնականների շարժման ընթացքում ալևիների դերը, վերջիններիս աջակցությունը ազգայնականներին՝ կապված շարժման առաջնորդ Մուստաֆա Քեմալի՝ աշխարհիկ պետություն ստեղծելու խոստումների հետ՝ ներկայացնելով նրա վերաբերմունքը ալևիների նկատմամբ մինչև հանրապետության հռչակումը և նրանից հետո:

- Պարզաբանել ալևիների՝ հիմնականում չեզոք վերաբերմունքը 1920-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած քրդական ազգային շարժումների և թուրքական պետության դեմ բարձրացրած ապստամբությունների նկատմամբ և նրանց կատարած քայլերը այդ շարժումների ընթացքում:

- Լուսաբանել 1937-1938 թվականներին Դերսիմի նահանգում քուրդ-ալևիական ցեղերի վերջնական ճնշման պատմությունը, նկարագրել դեպքերը և վերլուծել դրանց պատճառներն ու հանգամանքները:

- Ներկայացնել Թուրքիայում բազմակուսակցական համակարգի առաջացման ընթացքում ալևիների վերաբերմունքը տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին՝ իսլամի արմատականացման գործընթացի համատեքստում, ալևիների դրական վերաբերմունքը երկրում առաջ եկած ձախակողմյան ուժերի նկատմամբ ու քաղաքական գործունեություն սկսելուն ուղղված՝ ալևի գործիչների առաջին քայլերը:

- Վերլուծել 1960-ական թվականներին երկրում սկսված ուրբանիզացման երևույթի ազդեցությունն ալևիականության մի շարք հայեցակարգերի վրա, պարզաբանել ալևիականության համար հիմնարար համարվող որոշ խնդիրների առաջացման պատճառներն ու հանգամանքները:

- Պարզաբանել 1970-ական թվականների երկրորդ կեսին Թուրքիայի մի շարք շրջաններում աջակողմյան արմատականների կողմից ալևիների և սուննիների միջև հրահրված արյունալի բախումների պատճառները, վերլուծել 1980թ. հեղաշրջումից հետո ալևիների նկատմամբ կառավարության քաղաքականության փոփոխությունը:

- Լուսաբանել 1990-ական թվականներին սկիզբ առած ալևիական շարժման գործընթացը, նախադրյալները և պարզաբանել ալևիական ինքնության շուրջ ալևիների

համախմբման պատճառներն ու ներկայացնել նրանց պահանջները պետության նկատմամբ:

- Ուսումնասիրել իրենց պահանջների իրագործման ուղղությամբ ալիների կատարած քայլերը, ներկայացնելով ալիական շարժման արդի փուլը՝ վերլուծել պետության կողմից վերջին շրջանում կազմակերպված միջոցառումները, որոնք նախատեսված էին լուծելու ալիների խնդիրները:
- Ներկայացնել ալիական միությունների կազմավորումն ու գործունեությունը դեպի եվրոպական երկրներ տեղի ունեցած արտագաղթի արդյունքում, ուսումնասիրել նրանց դերն ու նշանակությունն ալիական շարժման գործում:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հայկական պատմագրության մեջ մինչ օրս չկա համապարփակ որևէ աշխատություն, որը կանդրադառնա ալիների պատմությանը Թուրքիայի հանրապետական շրջանում: Այն հայ պատմաբանների կողմից չի լուսաբանվել նաև խորհրդային շրջանում: Որոշ հետազոտողներ ալիների խնդրի վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել XIX դարի վերջին և XX դարի առաջին կեսին՝ հիմնականում անդրադառնալով քվլբաշների կամ ալիների կրոնական արարողություններին, նկարագրելով նրանց կենցաղը, բնակավայրերը: Ժամանակակից որոշ հետազոտողներ էլ միայն հպանցիկ են անդրադարձել առանձին իրադարձություններին, սակայն այլ է եղել աշխատության առջև դրված հիմնախնդիրների լուսաբանման կտրվածքը:

Ատենախոսությունը մի շարք աղբյուրների, գիտական աշխատությունների, թեմային առնչվող բազմաթիվ ուսումնասիրությունների հենքի վրա Թուրքիան հանրապետություն հռչակվելուց ի վեր ալիականության և ալիների պատմությունն ամբողջովին ներկայացնելու՝ մինչ այժմ կատարված առաջին փորձն է, ուր համապարփակ կերպով ներկայացվում է ալիների պատմությունը Թուրքիայում, ինչպես նաև անդրադարձ է կատարվում եվրոպական որոշ երկրներում ստեղծված ալիական կազմակերպությունների գործունեությանը:

Ուստի, սույն աշխատությունը՝ որպես ալիականության Թուրքիայի հանրապետական շրջանի պատմության համակողմանի և ամբողջական ուսումնասիրության առաջին փորձ, նորույթ է հայկական պատմագրության մեջ:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ուսումնասիրությունն ընդգրկում է XX դարի առաջին քառորդից մինչև XXI դարի առաջին տասնամյակն ընկած ժամանակահատվածը: Նկարագրվում են թե՛ Թուրքիայում, թե՛ Եվրոպայի որոշ երկրներում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ, ինչպես նաև ներկայացվում են դրանց հանգամանքները և

պատճառները՝ ավելի համապարփակ լուսաբանելով դրանք այլ երևույթների համատեքստում:

Ի հավելումն այս ժամանակաշրջանի, ալիականության խնդրի մասին ավելի խոր պատկերացում տալու համար պատմական ակնարկի տեսքով ներկայացվում է ալիականության պատմությունը Օսմանյան կայսրության գոյության ժամանակահատվածում:

Նման մոտեցումը, անշուշտ, պայմանավորված է ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու անհրաժեշտությամբ և ալիների՝ Թուրքիայի հանրապետական շրջանի պատմության ուսումնասիրման գիտական կարևորությամբ:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության շարադրման մեթոդաբանական հիմքն ալիների վերաբերյալ առկա աղբյուրների, հայ, ինչպես նաև թուրք և արևմտյան հեղինակների գիտական աշխատությունների, այդ թվում եվրոպացի մի շարք հեղինակների կողմից կատարված դաշտային հետազոտությունների, տարբեր իրադարձությունների վերաբերյալ առկա որոշ տեսակետների և հարցադրումների, Թուրքիայի պատմության թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական շրջանում ալիների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների քննախույզ հետազոտությունն է և փաստերի պատմահամեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթները, մեկնաբանությունները, եզրահանգումներն ու նկատառումները կարող են օգտակար լինել Թուրքիայի և ալիականության պատմության ինչպես առանձին հիմնախնդիրների ուսումնասիրման, այնպես էլ ժամանակակից փուլում տեղի ունեցող մի շարք գործընթացներ վերլուծելու, հետագա զարգացումները լավագույնս հասկանալու և գնահատելու համար:

Ատենախոսության մեջ արծարծված դրույթները, մասնավորապես ալիների խնդիրների և պահանջների վերաբերյալ, կարող են օգտագործվել Թուրքիայի պատմությունը նվիրված համալսարանական դասախոսություններում և հատուկ դասընթացներում:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում, ինչպես նաև Երիտասարդ արևելագետների միջազգային գիտաժողովների ժամանակ կարդացած զեկույցներում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը շարադրված է հայերեն, թուրքերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների, պարբերականների, հայ և օտարազգի հետազոտողների՝ խնդրո առարկա թեմային մվիրված աշխատությունների ու հոդվածների քննական հետազոտության և վերլուծության հիման վրա:

Օգտագործված գրականությունն ուսումնասիրելիս հանդիպեցինք սույն ատենախոսության մեջ քննարկված հիմնահարցերի մի մասի՝ ինչ-ինչ առումով ուսումնասիրված լինելու փաստին, սակայն, ինչպես արդեն վերը նշել ենք, հայ պատմագիտության մեջ մինչ օրս չկա աշխատություն՝ Թուրքիայի հանրապետական շրջանում ալկիների պատմության հետազոտման ամբողջական կտրվածքով, քանի որ խորհրդային պատմաբանների կողմից նյութը չի ուսումնասիրվել, իսկ ժամանակակից որոշ հայ հետազոտողներ սահմանափակվել են միայն պատմական առանձին դրվագների լուսաբանմամբ:

Ուսումնասիրության այն հատվածի համար, որտեղ նկարագրվում է ալկիականության ձևավորման գործընթացը, որպես սկզբնաղբյուր հանդիսացել են միջնադարյան հայ մատենագիրներ Առաքել Դավրիժեցու¹, Կիրակոս Գանձակեցու², Անդրեաս Սարկավազ Եվդոկեցու³, Մատթեոս Ուռհայեցու⁴, Արիստակես Լաստիվերցու⁵, իսկ պատմական որոշ իրադարձությունների լուսաբանման նպատակով՝ Ս. Պալասանեանի⁶, Լեոյի⁷ արժեքավոր աշխատությունները, ինչպես նաև թուրք պատմիչ Էվլիյա Չելեբիի պատմությունը⁸:

Ալկիականության ծագման մասին գոյություն ունեցող տեսակետների, ինչպես նաև ալկիների սովորույթների և ավանդույթների համակողմանի ուսումնասիրմանը մեծապես նպաստել են հայ հետազոտողներ Ն. Տաղավարեանի⁹, Գ. Հալաջյանի¹⁰, Գ.

¹ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988:

² Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:

³ Անդրեաս Սարկավազ Եվդոկեցու Ժամանակագրությունը, - Մանր ժամանակագրություններ, հատոր 1, Երևան, 1951:

⁴ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991:

⁵ Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971:

⁶ Պալասանեան Ս., Պատմութիւն հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1902:

⁷ Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1969:

⁸ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր 4, Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, 1967:

⁹ Տաղավարեան Ն., Քրիստոնեական բողոքականության եւ գրգռվածներու աղանդին ծնունդը, Կ.Պոլիս, 1914:

¹⁰ Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, - Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 5, Երևան, 1973; Թափառական, Կիսանկախ Տերսիմի հայկական ծագումը (փաստեր պատմութեան համար), Հայրենիք ամսագիր, հոկտեմբեր, 1931, էջ 141-152:

Սրվանձտյանցի¹¹, Ե. Թոփչեանի¹², Գ. Երևանյանի¹³, Ն. Աղոնցի¹⁴, Ա. Ալպոյաճեանի¹⁵ կատարած ուսումնասիրությունները, որոնք պարունակում են փաստագրական և վերլուծական կարևոր նյութեր, ինչպես նաև խնդրո առարկա նյութի շուրջ հարուստ տեղեկություններ պարունակող «Պատմագիրք Չնչկաձագի» արժեքավոր հավաքածուն¹⁶: Նշենք, որ այս հեղինակները հիմնականում շեշտադրում են, որ ալևիների մի մասն ունի հայկական ծագում, սակայն այս հարցը դուրս է մնում աշխատության սահմաններից, քանի որ առանձին ուսումնասիրման նյութ է:

Մասնավորապես Ն. Տաղավարեանի և Գ. Հալաջյանի աշխատությունները կարևոր են ալևիների պատմության մի շարք դրվագներ վերլուծելու և խորությամբ ընթռնելու տեսանկյունից, քանի որ պարունակում են արժեքավոր փաստագրական տեղեկություններ և որոշ իրադարձությունների հանգամանալից վերլուծություններ:

Թեմայի շուրջ կատարված ուսումնասիրությունը հիմնվում է նաև մի շարք այլազգի հետազոտողների աշխատությունների վրա, որոնցից են Վ. Գորդլևսկու¹⁷, Վ. Մինորսկու¹⁸, Ի. Մելիքովի¹⁹, Ջ. Բրաունի²⁰, Մ. Գրենարդի²¹, Լ. Մոլինիքս-Սիլի²², Ս. Թրոուբրիջի²³, Գ. Գրայվերի²⁴, Ա. Հեֆիքի²⁵, Ֆ. Բյոփրուլուի²⁶, Ա. Օջաքի²⁷ ուսումնասիրությունները: Մասնավորապես ուշադրության են արժանի Վ. Գորդլևսկու և Վ. Մինորսկու աշխատությունները, որոնք հեղինակները կազմել են հիմնականում իրենց իսկ կողմից կատարված դաշտային հետազոտությունների հիման վրա և պարունակում են բազմաթիվ կարևոր փաստեր ալևիական բնակավայրերի, գյուղական համայնքների վերաբերյալ:

Պատմական մի շարք իրադարձություններ ատենախոսության մեջ լուսաբանվել են Մ. Ջուլալյանի²⁸, Կ. Սասունիի²⁹, Լ. Քինրոսսի³⁰, Մ. Բալիվեի³¹, Ս. Ֆարոքիի³², Լ.

¹¹ Սրվանձտյանց Գ., Երկեր, հատոր 2, Երևան, 1982:

¹² Թոփչեան Ե., Իսլամ, Թիֆլիս, 1899:

¹³ Երևանյան Գ., Պատմութիւն Չարսանձագի հայոց, Պեյրոս, 1956:

¹⁴ Աղոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989:

¹⁵ Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950; Ալպոյաճեան Ա., Քրտական ազգութեան նկարագիրը եւ ցեղակցական յարաբերութիւններ հայոց հետ, Հայրենիք ամսագիր, օգոստոս, 1931, էջ 87-102:

¹⁶ Պատմագիրք Չնչկաձագի, խմբագիր՝ Հայկազն Գ. Ղազարեան, Պեյրոս, 1971:

¹⁷ Гордлевский В. А., Избранные сочинения, том I, Москва, 1960.

¹⁸ Минорский В., Курды, Петроград, 1915.

¹⁹ Mélikoff I., Uyur İdik Uyardılar (Alevilik-Bektaşılık Araştırmaları), İstanbul, 2006; Bektashi/Kizilbash: Historical Bipartition and Its Consequences, - Alevi Identity. Cultural, religious and social perspectives, İstanbul, 1998, pp. 1-7.

²⁰ Brown J., The Darvishes or oriental spiritualism, London, 1927.

²¹ Гренарда М. Ф., Религиозная секта кызылбашей в Малой Азии, Известия штаба Кавказского военного округа, Тифлис, N:7-8, март, 1905, 1-14 с.

²² Molyneux-Seel L., A journey in Dersim, The Geographical Journal, Vol. 44, No. 1, Jul., 1914, pp. 49-68.

²³ Trowbridge S., The Alevis, or deifiers of Ali, The Harvard Theological Review, Vol. 2, No. 3, Jul., 1909, pp. 340-353.

²⁴ Driver G., The Religion of the Kurds, Bulletin of the School of Oriental Studies, Vol. 2, No. 2, 1922, pp. 197-213.

²⁵ Refik A., Rafizilik ve Bektaşılık (1558-1591), - Özkaynaklarından Alevilik-Bektaşılık Araştırmaları, İstanbul, 1999, s. 145-158.

²⁶ Köprülü F., Bektaşiliğin menşeleri Küçük Asyada İslam batınilığının tarihsel gelişimi hakkında bir deneme, - Özkaynaklarından Alevilik-Bektaşılık Araştırmaları, İstanbul, 1999, s. 105-125.

²⁷ Ocak A., Türk Sufiliğine Bakışlar, İstanbul, 2005.

²⁸ Ջուլալյան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966:

Գարնետի³³, Բ. Քոչաղաղի³⁴, Դ. Ավջրողլուի³⁵, Հ. Միրջաֆարիի³⁶, Մ. Աբդաղի³⁷, Ի. Ուզունչարշլլի³⁸, Ի. Դանըմենդի³⁹, Ֆ. Քյոփրուլուի⁴⁰, Ա. Գյուլփինարլլի⁴¹ հետազոտությունների քննախույզ ուսումնասիրման արդյունքում: Հարկավոր է նշել այն հանգամանքը, որ թուրք հեղինակների աշխատությունները քննվել են մեր կողմից և օգտագործվել որոշ վերապահությամբ՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ շատերը հաճախ պարունակում են զգայական վերլուծություններ: Մասնավորապես Դ. Ավջրողլուի և Ի. Ուզունչարշլլի պատմություններում առկա է ակնհայտ բացասական վերաբերմունք քրդլրբաշների նկատմամբ, ինչը երբեմն խոչընդոտում է օբյեկտիվ վերլուծություններ կատարելուն:

Հանրապետական Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների, մասնավորապես քրդական ապստամբությունների, Մուստաֆա Քեմալի ղեկավարած շարժման ժամանակ ակիների դերի, 1960-ական թվականներից Թուրքիայում սկսված ուրբանիզացման երևույթի, որի արդյունքում ակիականությունը կրեց մի շարք ձևափոխումներ, ակի-սուննիական բախումների և ակիական շարժման ու թուրքական պետության նկատմամբ ակիների ունեցած պահանջների վերաբերյալ նյութերի ուսումնասիրման գործում մեծ նշանակություն են ունեցել Մ. Հասրաթյանի⁴², Ռ. Կոնդակչյանի⁴³, Ա. Սաֆրաստյանի⁴⁴, Հր. Միմնյանի⁴⁵, Վ. Տեր-Մաթևոսյանի⁴⁶, Ա. Նովիչևի⁴⁷, Դ. Շենքլենդի⁴⁸, Կ. Էդմոնդսի⁴⁹, Հ. Փոուլթոնի⁵⁰, Դ. Ավջրողլուի⁵¹, Հ.

²⁹ Սասունի Կ., Քիրոս ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերությունները, Պեյրոս, 1969:

³⁰ Kinross L., The Ottoman Centuries, New York, 1977.

³¹ Balivet M., Simavnalı Bedreddin ve Trabzonlu Georgias, - Özkaynaklarından Alevilik-Bektaşilik Araştırmaları, İstanbul, 1999, s. 282-307.

³² Faroqi S., The Tekke of Haci Bektaş: social position and economic activities, International Journal of Middle East Studies, Vol. 7, No. 2, Apr., 1976, pp. 183-208.

³³ Garnett L., The Turkish People, London, 1909.

³⁴ Kocadağ B., Doğuda Aşiretler, Kürtler, Aleviler, İstanbul, 2004.

³⁵ Avcioğlu D., Türklerin Tarihi, Dördüncü kitap, İstanbul, 1983.

³⁶ Mirjafari H., Sufism and gradual transformation in the meaning of sufi in Safavid period, - Tarih Dergisi, İstanbul, 1979, s. 157-166.

³⁷ Akdağ M., Türkiyenin İktisadî ve İçtimaî Tarihi, Cilt II, İstanbul, 1974.

³⁸ Uzunçarşılı I., Osmanlı Tarihi, I Cilt, Ankara, 1947; Uzunçarşılı I., Osmanlı Tarihi, II Cilt, Ankara, 1949; Uzunçarşılı I., Osmanlı Tarihi, III Cilt, 1 Kısım, Ankara, 1951; Uzunçarşılı I., Osmanlı Tarihi, III Cilt, 2 Kısım, Ankara, 1954.

³⁹ Danişmend İ., İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi, Cilt 1, İstanbul, 1947; Danişmend İ., İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi, Cilt 3, İstanbul, 1950.

⁴⁰ Köprülü F., Osmanlı devletinin kuruluşu, Ankara, 1959.

⁴¹ Gölpinarlı A., Kızılbaş, - Özkaynaklarından Alevilik-Bektaşilik Araştırmaları, İstanbul, 1999, s. 238-253.

⁴² Гасратян М., Курды Турции в новейшее время, Ереван, 1990.

⁴³ Кондакчян Р., Турция: внутренняя политика и ислам, Ереван, 1983; Внутренняя политика Турции (1950-1960), - Страны и народы ближнего и среднего востока, том V, Ереван, 1970, 5-140 с.

⁴⁴ Safrastian A., Kurds and Kurdistan, London, 1948.

⁴⁵ Միմնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

⁴⁶ Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Երևան, 2008:

⁴⁷ Новичев А., История Турции, Том I, Ленинград, 1963.

⁴⁸ Shankland D., The Alevi in Turkey, New York, 2003.

⁴⁹ Edmonds C., Kurds, Turks and Arabs, London, 1957.

⁵⁰ Poulton H., Silindir şapka, bozkurt ve hilal, İstanbul, 1999.

⁵¹ Avcioğlu D., Milli kurtuluş tarihi, Üçüncü kitap, İstanbul, 1974.

Քուչուքի⁵², Բ. Օզի⁵³, Օ. Չալըշլարի⁵⁴, Է. Ջենգինի⁵⁵ արժեքավոր աշխատությունները: Մասնավորապես ուշադրության է արժանի Դ. Շենքլենդի «Ալևիները Թուրքիայում» աշխատությունը, որը հեղինակը պատրաստել է դաշտային հետազոտության արդյունքում 1980-ական թվականներին: Այն կարևոր տեղեկություններ է պարունակում XX դարի երկրորդ կեսին ալևիների պատմության վերաբերյալ, մանրամասն նկարագրվում են ալևիների կողմից բնակեցված շրջաններում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ:

Նյութի շարադրման համար չափազանց օգտակար են եղել նաև Ա. Դումանյանի⁵⁶, Գ. Ջիգանշինայի⁵⁷, Մ. Բրոյնեսենի⁵⁸, Ռ. Օլսոնի⁵⁹ և այլոց հոդվածները՝ աշխատությունում արծարծվող հիմնախնդիրների մաս կազմող առանձին իրողությունների վերաբերյալ: Հարկավոր է նշել, որ Մ. Բրոյնեսենը, ով հիմնականում զբաղվել է քրդերի վերաբերյալ ուսումնասիրություններով, իր հոդվածներում բազմիցս անդրադառնում է քուրդ-ալևիների խնդիրներին և հաղորդում արժեքավոր տեղեկություններ:

Քրդական ապստամբությունների ուսումնասիրմանը մեծապես նպաստել է նաև ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը:

Հարկավոր է նշել, որ ընդհանուր առմամբ ալևի հեղինակների աշխատությունները ևս հանգամանորեն քննվել են մեր կողմից և օգտագործվել աստենախոսությունում որոշ վերապահությամբ, քանի որ մի շարք դեպքերում, ինչպես, օրինակ, Բ. Քոջադադի և Բ. Օզի աշխատություններում առկա են միտումներ՝ պատմական որոշ գործիչների վերագրել ալևիական ծագում, իսկ որոշ իրադարձություններում ուռճացնել ալևիների դերը:

Եվրոպայում բնակվող ալևիների, նրանց և թուրքաբնակ ալևիների միջև հարաբերությունների, ինչպես նաև ալևիական մի շարք կազմակերպությունների վերաբերյալ նյութերի գիտական մշակման համար բացառիկ կարևորություն ունեն Մ.

⁵² Küçük H., *The Role of the Bektashis in Turkey's National Struggle*, Leiden, 2002.

⁵³ Öz B., *Kurtuluş Savaşında Alevi-Bektaşiler*, İstanbul, 2003; Öz B., *Alevilik Tarihinden İzler*, İstanbul, 1997.

⁵⁴ Çalışlar O., *Aleviler vali de olmak istiyoruz general de*, İstanbul, 2009.

⁵⁵ Xemgîn E., *Kürdistan tarihi*, cilt 3, Köln, 1991.

⁵⁶ Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., - Թուրքական և օսմանագիտական հետազոտություններ, հատոր IV, Երևան, 2006, էջ 103-113:

⁵⁷ Зиганшина Г., Роль религиозных орденов Турции в исламистском движении 80-90-х гг. XX в., - Современная Турция: проблемы и решения, Москва, 2006, 105-117 с.

⁵⁸ Bruinessen M., *Clashes between or within civilizations?; Forced evacuations and destruction of villages in Dersim (Tunceli), and Western Bingöl, Turkish Kurdistan, Spetember-November 1994; Kurds, Turks and the Alevi revival in Turkey; Muslims, Minorities and Modernity: The restructuring of heterodoxy in the Middle East and Southeast Asia; Popular Islam, Kurdish nationalism and rural revolt: the rebellion of Shaikh Said in Turkey (1925); Religious practices in the Turco-Iranian world: continuity and change; The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38)*, <http://www.let.uu.nl/>

⁵⁹ Olson R., *The Kurdish rebellions of Sheikh Said (1925), Mt. Ararat (1930) and Dersim (1937-8): their impact on the development of the Turkish air force and on Kurdish and Turkish nationalism*, *Die Welt des Islams*, Vol. 40, No. 1, Leiden, 2000, pp. 67-94.

Սոկեֆիլդի⁶⁰, Ի. Ռիգոնի⁶¹ աշխատությունները, որոնք կատարվել են եվրոպական ալևիական կենտրոնների և միությունների գործունեության վերաբերյալ դաշտային հետազոտությունների հիման վրա: Մասնավորապես Մ. Սոկեֆիլդը հանգամանորեն ուսումնասիրել է Գերմանիայում բնակվող ալևիական համայնքը և իր աշխատությունում մանրամասնորեն ներկայացնում է ալևիական կազմակերպությունների ստեղծման պատմությունը, լուսաբանում մի շարք կարևոր իրադարձություններ:

Նյութը կազմելիս օգտակար են եղել նաև Ն. Կիրենի⁶², Ս. Ուստորգատրիի⁶³, Ջ. Կորվետի⁶⁴, Ի. Քափլանի⁶⁵, Մ. Գեմիրայի⁶⁶ և այլոց մի շարք հոդվածներ, ինչպես նաև Եվրոպական խորհրդին կից Միգրացիայի, փախստականների և բնակչության հարցերով զբաղվող կոմիտեի զեկույցները⁶⁷:

Ալևիների վերաբերյալ ատենախոսության մեջ վիճակագրական կարևոր տվյալները ներկայացված են վերոնշյալ հայ հետազոտողների, մասնավորապես Վ. Թաշջյանի⁶⁸, ինչպես նաև այլազգի ուսումնասիրողներ Է. Ռեկլիի⁶⁹, Ջ. Թեյլորի⁷⁰ աշխատություններում հիշատակված տեղեկությունների հիման վրա:

Աշխատության մեջ լայնորեն օգտագործվել է նաև թուրքական և արևմտյան մամուլը:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, վերջաբանից, հավելվածից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, խնդիրների ու նպատակների մասին, պարզաբանվում է աշխատանքի գիտական

⁶⁰ Sökefeld M., Struggling for recognition: the Alevi movement in Germany and in transnational space, New York, 2008.

⁶¹ Rigoni I., Alevis in Europe: a narrow path towards visibility, - Turkey's Alevi enigma, Leiden, 2003.

⁶² Киреев Н., Турецкая диаспора на западе, - Мусульмане на западе, Москва, 2002, 49-91 с.

⁶³ Утургаури С., Турецкая диаспора в Германии. Социокультурная эволюция, - Ближний Восток и современность, выпуск 21, Москва, 2004, 256-261 с.

⁶⁴ Gorrvt J., Following December's EU Summit, Turkey forced to reassess issue of minorities, Washington report on Middle East affairs, March, 2005, pp. 48-49.

⁶⁵ Kaplan I., Almanya'da üç Eyalette daha Alevilik dersleri başladı!, http://www.aabk.info/aciklama.html?&cHash=f28858529a&tx_ttnews%5BbackPid%5D=11&tx_ttnews%5Btt_news%5D=7194; Avrupada Alevilik, http://www.isvecakm.com/avrupada_alevilik.htm

⁶⁶ Demiray M., Wrestling for Self-Definiton in Transnational Space: A Case Study of the Identity Construction of Alevis in Turkey and Germany, <http://inter-disciplinary.net/ati/diversity/diasporas/d1/tuncel%20paper.pdf>

⁶⁷ The Turkish presence in Europe: migrant workers and new European citizens, Committee on Migration, Refugees and Population, Parliamentary Assembly of the Council of Europe, <http://assembly.coe.int/Documents/WorkingDocs/Doc06/EDOC11083.pdf>

⁶⁸ Tachjian V., La France en Cilicie et en Haute-Mésopotamie Aux confins de la Turquie, de la Syrie et de l'Irak (1919-1933), Paris, 2004.

⁶⁹ Ռեկլիի Է., Լազիստան և Քուրդիստան, Վաղարշապատ, 1893:

⁷⁰ Taylor J., Journal of a Tour in Armenia, Kurdistan and Upper Mesopotamia, with Notes of Researches in the Deyrsim Dag, in 1866, Journal of the Royal Geographical Society of London, Vol. 38, 1868, pp. 281-361.

նորույթը, տրվում են թեմայի ժամանակագրական սահմանները, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ներկայացվում է օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը և մեթոդաբանական հիմքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«ԱԼԵՎԻՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ «Ալևիականությունը մինչ հանրապետական շրջանը» ենթագլխում համառոտ կերպով ներկայացվում են ալևիների պատմության բոլոր նշանակալի իրադարձությունները՝ սկսած XI դարում օղուզ թուրքմենների՝ Փոքր Ասիա քոչելու գործընթացից մինչև Օսմանյան կայսրության անկումը՝ առաջ քաշելով ալևիականության՝ որպես կրոն ձևավորման վերաբերյալ գիտական աշխարհում արժարժվող հիմնական տեսակետը, ծագման հանգամանքները և հնարավոր պատճառները: Հպանցիկ կերպով անդրադարձ է կատարվում օսմանյան սուլթանների դեմ տեղի ունեցած մի շարք քվբաշական ապստամբություններին, ինչպես նաև XVI-XVII դարերում ծավալված թուրք-պարսկական պատերազմներին՝ լուսաբանելով ալևիների կապը այս իրադարձություններին:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «Ալևիական համայնքը Թուրքիայում հանրապետության հռչակումից մինչև Դերսիմի 1937-1938 թթ. իրադարձությունները», որտեղ խոսվում է Մուստաֆա Քեմալի ղեկավարած ազգայնական ուժերի շարժման ընթացքում, ինչպես նաև հանրապետության առաջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ալևիների դերի մասին, վերլուծվում է քեմալականների քաղաքականությունն ալևիների նկատմամբ, ինչպես նաև՝ 1920-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած քրդական ապստամբությունների ժամանակ ալևիների դիրքը պետության և քուրդ ապստամբների նկատմամբ:

Ենթագլխում ներկայացվում է նաև Դերսիմի նահանգում դարեր շարունակ կիսանկախ կենսակերպ պահպանած քուրդ-ալևի ցեղախմբերի պատմությունը՝ համառոտ կերպով ներկայացնելով XIX դարում այստեղ տեղի ունեցած ալևիական ապստամբությունները, որոնք բազում անգամներ փորձել են ճնշել սուլթանները՝ մեծ գորք ուղարկելով ապստամբների դեմ, սակայն այդպես էլ մինչև կայսրության անկումը Դերսիմի նահանգը մնացել է անկախ՝ չվճարելով հարկերը և չենթարկվելով պետության պահանջներին: Մասնավորապես լուսաբանվում են 1937-1938 թվականներին Դերսիմում տեղի ունեցած դաժան իրադարձությունները, երբ պետությունը, ռազմական լայնածավալ գործողություններ սկսելով, տեղահանում է նահանգի բնակիչներին՝ կիրառելով ամենադաժան միջոցները և կոտորելով տասնյակ հազարավոր բնակիչների:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«ԱԼԵՎԻՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1940-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Ալևիները Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում 1940-1980-ական թվականներին»,

ներկայացվում է այն իրողությունը, երբ Թուրքիայում միակուսակցական համակարգից բազմակուսակցականի անցման գործընթացի արդյունքում ստեղծված Դեմոկրատական կուսակցությունը ստանձնում է երկրի կառավարումը, ինչը կրկին հույսեր է արթնացնում ալիների շրջանում: Սակայն իսլամի ազատականացմանն ուղղված գործընթացի սկսվելը կրկին հիասթափեցնում է ալիներին, քանի որ երկրում մեծանում է սուննիների դերը՝ խոչընդոտ հանդիսանալով ալիների ազատ գործելակերպին, ինչի պատճառով վերջիններս անցնում են ձախակողմյան ուժերի կողմը, որոնք հիմնականում տոգորված էին սոցիալիստական գաղափարախոսությամբ:

Ենթագլխում նկարագրվում են 1970-ական թվականներին տեղի ունեցած Մալաթիայի, Սվազի և Քահրամանմարաշի արյունալի իրադարձությունները, երբ աջակողմյան ծայրահեղական ուժերի կողմից ալիների և սուննիների միջև հրահրված փողոցային բախումների արդյունքում զոհվում և վիրավորվում են բազմաթիվ մարդիկ:

Սակայն 1980թ. հեղաշրջումից հետո պետությունը ընդունում է թուրք-իսլամական համադրության վերաբերյալ հայեցակարգը, փոխելով քաղաքականությունն ալիների նկատմամբ՝ սկսում է ավելի «հանդուրժողական» վերաբերմունք ցուցաբերել՝ հասարակությանը ներարկելով այն գաղափարը, թե ալիները նույն սուննիներն են, սակայն՝ տարբեր սովորույթներով և մշակութային հենքով: Դա ալիների շրջանում մեծ դժգոհություն է առաջացնում, քանզի վերջիններս գիտակցում էին, որ կառավարությունն իրենց նկատմամբ ձեռնարկել է ձուլման քաղաքականություն:

Երկրորդ՝ «Ուրբանիզացիայի ազդեցությունը ալիականության որոշ սկզբունքների վրա» վերնագրով ենթագլխում վերլուծվում է 1960-ական թվականներին Թուրքիայում լայն թափով սկսված ուրբանիզացման երևույթը, ինչի արդյունքում ալիականության արժեքային համակարգը ենթարկվում է ձևափոխության, մի շարք ավանդույթներ կորցնում են իրենց իմաստը: Նկարագրվում է ալիների շրջանում նոր խնդիրների առաջացման գործընթացը՝ կապված ալիական գաղտնիքների բացահայտման, նոր բնակավայրերում սեփական ինքնության պահպանմանն ուղղված ջանքերի հետ, ինչպես նաև արժարժվում են մի շարք հարցեր՝ քաղաքային միջավայրում ալիների կյանքի որոշ մանրամասնությունների վերաբերյալ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«ԱԼԵՎԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ «Ալիների շարժումը 1990-2000-ական թվականներին» վերնագրված ենթագլխում մանրամասնորեն նկարագրվում են 1993թ. Սվազում և 1995թ. Ստամբուլի Գազիօսմանփաշա թաղամասում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները և դրանց խթանիչ ազդեցությունն ալիական նոր ձևավորվող շարժման վրա:

Լուսաբանվում է ալիական շարժման գործընթացը, որը սկսվել է 1990-ական թվականների սկզբին՝ մեծապես աջակցություն ստանալով Թուրքիայից արտագաղթի արդյունքում Եվրոպայի մի շարք երկրներում ձևավորված ալիական միությունների և կազմակերպությունների կողմից: Այս ժամանակահատվածում ալիների շրջանում

հիմնարար է հանդիսանում այն գաղափարը, որ հարկավոր է համախմբվել ալկիական ինքնության գաղափարի շուրջ:

Այստեղ ներկայացվում և վերլուծվում են թուրքական պետության հանդեպ ալկիների պահանջները, դրանց ի կատար ածմանն ուղղված քայլերը, որոնք վերջին շրջանում իրականացնում են ալկիական կազմակերպությունները:

Այս ենթագլխում լուսաբանվում են վերջին տարիներին ալկիների խնդիրների լուծմանն ուղղված՝ կառավարության որոշ քայլեր, մասնավորապես յոթ քննարկումները, որոնց արդյունքը, սակայն, գոհացուցիչ չէր ալկիների համար:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է «Ալկիները Եվրոպայում», խոսվում է 1960-ական թվականներին Թուրքիայից դեպի եվրոպական մի շարք երկրներ, մասնավորապես դեպի Գերմանիա սկսված արտագաղթի, ինչպես նաև դրա արդյունքում Եվրոպայում ալկիական կազմակերպությունների ստեղծման գործընթացի մասին:

Այստեղ վերլուծվում են եվրոպական երկրներում ալկիների ծավալած սկզբում՝ մշակութային, ապա նաև՝ քաղաքական գործունեությունը, եվրոպական երկրների կողմից ալկիական համայնքների ճանաչմանն ուղղված ջանքերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ մեջ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները, ատենախոսը հետևության է հանգում.

- Ալկիականությունը՝ որպես կրոն, առաջացել է ավելի վաղ դարերում գոյություն ունեցող կրոնների և աղանդների գաղափարական հենքի վրա՝ դարերի ընթացքում ենթարկվելով ձևափոխության: Այն տարբեր հավատքների բարդ, խճճված ամբողջություն է: Ալկիականության ձևավորման վաղ շրջանի ուսումնասիրությունը կարևոր է հնագույն փոքրասիական կամ առաջավորասիական հավատալիքների գուգահեռ ուսումնասիրման առումով, քանի որ ալկիականության արմատները կապվում են մանիքեական, պավլիկյան և թոնդրակյան աղանդավորական շարժումների, ինչպես նաև XI դարից սկսած Փոքր Ասիա օղուգ թուրքմենների ներխուժման հետ, որոնք իրենց հետ բերեցին սեփական սովորույթները, ավանդույթները և շամանական ծիսակատարությունները: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ ճիշտ չէ ալկիականության արմատները փնտրել բացառապես այն իրադարձություններում, որոնց արդյունքում առաջացան իսլամի սուննիականություն և շիականություն ուղղությունները:

- XV-XVI դարերի ընթացքում վերջնականապես ձևավորվեց ալկիականությունը, ինչին նպաստեցին մի շարք հանգամանքներ.

1. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ապստամբությունները սոցիալական հավասարության գաղափարի իրագործման համար, որոնց ընթացքում ապստամբության առաջնորդներն իրենց ներկայացնում էին որպես Մահդի, ով եկել էր աշխարհը փրկելու:

2. Օսմանյան սուլթանների շիահաված քաղաքականությունը, որի պատճառով բազմաթիվ ալկիներ, սուլթանական լրտեսների կողմից հաշվառված լինելով որպես շիաներ, ենթարկվեցին կոտորածների:

3. Սեֆյանների դինաստիայի գահ բարձրանալը Պարսկաստանում. պարսից շահերը, Օսմանյան կայսրության հետ մշտապես ունենալով թշնամական հարաբերություններ, ի դեմս ալիների երկրի ներսում տեսնում էին ուժ, որը պատերազմական իրավիճակում կարող էր օգնել պարսկական զորքին, իսկ խաղաղ պայմաններում՝ մշտապես հանդես գալ որպես կայսրության հարավ-արևելյան շրջանները ապակայունացնող ուժ:

4. Կոտորածներից խուսափելու նպատակով ալիականություն դավանող խմբերի մեկուսանալը լեռնային դժվարամատչելի վայրերում, որտեղ բնակություն հաստատելով՝ ձևավորում էին գյուղական փակ համայնքներ:

- Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած երկրների կողմից ճնշումների դեմ 1919թ. Թուրքիայում սկսված ազգայնական շարժման ղեկավար Մուստաֆա Քեմալը հատուկ ուշադրության էր արժանացնում ալիներին՝ դիտելով նրանց որպես ուժ, որը կարելի էր օգտագործել թշնամիների դեմ շարժման ընթացքում: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ դրական վերաբերմունքը կրում էր ձևական բնույթ, ինչն անգամ քեմալականների շարժման ընթացքում սկսում է երևալ ալիներին բռնի սուննիականացնելու քաղաքականության տեսքով, ինչպես նաև հետագայում, երբ արդեն ամրապնդելով իրենց դիրքերը երկրում, քեմալականները ալի առաջնորդներին երկրի քաղաքական կյանքում ներգրավելու հարցում մերժողական դիրք են գրավում: Իրադարձությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ ալիները զուտ գործիք էին քեմալականների ձեռքում՝ հաջողության հասնելու համար, բայց իրականում վերջիններս չէին ցանկանում սուննիներից բացի կրոնական այլ խումբ տեսնել երկրում:

- Ալիական համայնքի ոգևորությունը, որ աճեց ազգայնական շարժման ընթացքում, զուր հույսեր արթնացրեց ալիների շրջանում, սակայն հետագայում դա փոխարինվեց հուսախաբությամբ, երբ կառավարության կողմից ըստ արժանվույն չգնահատվեց անգամ այն փաստը, որ քրդական ապստամբությունների ընթացքում ալիական մի շարք ցեղախմբեր ոչ միայն չեզոքություն պահպանեցին, այլ նաև որոշ դեպքերում փակեցին քուրդ ապստամբների ճանապարհը դեպի Դերսիմի անմատչելի շրջանները՝ այսպիսով թուրքական զորքին օգնելով ճնշելու ընդվզումները:

Ավելին, 1924թ. Թուրքիայում ընդունված օրենքը՝ կրոնական մի շարք հաստատությունների փակման և դրանց գործունեության կասեցման վերաբերյալ, առնչվեց նաև ալիներին, ինչը մեծ հարված էր նրանց համար: Արդյունքում երկրում կրկին գերիշխող դիրք գրավեց սուննիականությունը, և ալիական համայնքը կրկին մեկուսացավ արտաքին աշխարհից՝ անցնելով գաղտնի ծիսակատարություններ կատարելու, ծպտյալ ալիականություն դավանելու դարեր շարունակ մշակված կենսակերպին: Այս գործընթացը ալիների և պետության միջև անդունդի առաջացման սկիզբը դարձավ:

- Ալիական համայնքը վերջնականապես ճնշելու համար Քեմալի գլխավորած կառավարությունը որոշեց տեղահանել Դերսիմի նահանգի բնակչությանը, որպեսզի վերջնականապես լուծի դեռևս Օսմանյան կայսրության ժամանակաշրջանից առկա

խնդիրը: 1937-1938 թվականներին Դերսիմի շրջանում տեղի ունեցած ռազմական արշավի ընթացքում իրականացված ալիական կոտորածները վերջնականապես սեպ խրեցին ալիների և թուրքական պետության միջև՝ տասնամյակներ անց հզոր խթան հանդիսանալով ալիական շարժման համար:

- Ալիները ևս մեկ անգամ փորձեցին սատարել կառավարությանը Թուրքիայում բազմակուսակցական համակարգի հաստատումից հետո, սակայն իրադրությունը փոխվեց, երբ երկրում վերելք ապրեց սուննի արմատականությունը, թեև իրադարձությունների բերումով ալիները ևս կարողացան մասամբ ավելի ազատ գործել: Ալիներին այդ շրջանում մեծապես ճնշում էին սոցիալ-տնտեսական դժվար պայմանները, քանի որ դեռևս 1950-ականներին նրանք գլխավորապես բնակվում էին երկրի հարավ և հարավ-արևելյան տնտեսապես թույլ զարգացած շրջաններում:

- 1950-1960-ական թվականներին սկսված ուրբանիզացման երևույթը Թուրքիայում ձևափոխեց ալիական համայնքը: Ձևափոխվեց ալիական ավանդույթների մի մասը, իսկ մի շարք սովորույթներ ձեռք բերեցին նոր իմաստ՝ անդունդ առաջացնելով գյուղաբնակ և քաղաքաբնակ ալիների միջև: Ալիական համայնքում վերացավ գաղտնիության սկզբունքը, ինչը համայնքի պահպանման հիմնասյուներից մեկն էր: Տեղի ունեցած փոփոխությունները ապացուցեցին, որ ալիականությունն այդ շրջանում պատրաստ չէր դիմագրավելու այն փորձությունները, որոնք հանդիպեցին միջավայրի փոփոխության արդյունքում, երբ ալիները գյուղից տեղափոխվեցին քաղաք:

- Քաղաքային միջավայրին ընտելանալու գործընթացին զուգահեռ, որպես սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված միջոց՝ ալի երիտասարդությունը սկսեց հարել Թուրքիայում գործող ձախակողմյան շարժումներին՝ նաև լրացնելու համար այն դատարկությունը, որն առաջացել էր ալիական ինքնության թուլացման արդյունքում: Իսկ որոշ ալի գործիչներ փորձեցին իրենց կրոնակիցներին հավաքել զուտ ալիական կուսակցությունների շուրջ՝ չհասնելով, սակայն, լուրջ հաջողությունների, ինչը կրկին պայմանավորված էր ալիների՝ կրոնական և համայնքային համախմբվածության անհրաժեշտության վերաբերյալ թույլ պատկերացում ունենալով:

- Ալիների համախմբման համար մեծ նշանակություն ունեցան 1970-ական թվականների վերջին ալիների և սուննիների միջև տեղի ունեցած բախումները, որոնք սուննիականության էլ ավելի արմատականացման գործընթացի արդյունք էին: Դրանից հետո պետությունը, որպես կանխարգելող քայլ, սկսեց վարել ալիներին աստիճանաբար սուննիներին ձուլելու քաղաքականություն: Այդ իրողությանը հակազդելու նպատակով ալիների շրջանում հասունացավ սեփական կրոնական ինքնության շուրջ համախմբվելու և միասնաբար պայքարելու գաղափարը: Այդ պատճառով 1980-ական թվականների երկրորդ կեսը կարող ենք համարել Թուրքիայում ալիական շարժման ձևավորման սկիզբը:

- Ալիական շարժումը սկսվեց 1990-ական թվականներին: Դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ.

1. Աշխուժացավ կապը Եվրոպայում և Թուրքիայում բնակվող ալևիների միջև:
2. Եվրոպայում ստեղծվեցին բազմաթիվ ալևիական միություններ և կազմակերպություններ, որոնք սկսեցին ակտիվորեն պայքարել Թուրքիայի, իսկ ավելի ուշ նաև եվրոպական երկրների կառավարությունների կողմից իրենց իրավունքների ճանաչման համար:
3. Թուրքիայում 1993 և 1995 թվականներին համապատասխանաբար՝ Սվազի «Մաղըմաք» հյուրանոցում և Ստամբուլի Գագիօսմանփաշա թաղամասում տեղի ունեցան բախումներ ալևիների և սուննիների միջև, որոնք զայրացրին ալևիներին և վերջնականապես ոտքի հանեցին պայքարի:
4. Մի քանի ալևի քաղաքական գործիչներ «Եվրոպայի ալևիական միությունների դաշնության» աջակցությամբ փորձեցին քաղաքական գործունեություն ծավալել՝ հիմնելով կուսակցություն, սերտ հարաբերություններ պահելով Եվրոպայի ալևիական միությունների հետ:
5. Թուրքական պետությունը, թուրք-իսլամական համադրության հայեցակարգի շրջանակներում փոխելով քաղաքականությունն ալևիների նկատմամբ, սկսեց քարոզել ալևիական մշակույթն իսլամական մշակույթի համատեքստում՝ արտոնելով մի շարք ջեմլիների բացումը՝ որպես մշակութային օջախներ:
 - Ալևիները շարժման արդի փուլում արդեն թուրքական պետությունից ունեն մի շարք պահանջներ, որոնք իրենց իրավունքների ճանաչման հիմնաքարերն են.
 1. ճանաչել ալևիականությունը՝ որպես իսլամից առանձին կրոն,
 2. դադարեցնել Թուրքիայում կրոնական հարցերով նախագահության գործունեությունը,
 3. դադարեցնել վերացնել կրոնական պարտադիր դասերի անցկացումը,
 4. դադարեցնել ալևիական բնակավայրերում մզկիթների կառուցման քաղաքականությունը,
 5. ճանաչել ջեմլիները՝ որպես ալևիական պաշտամունքի վայրեր,
 6. «Մաղըմաք» հյուրանոցը վերածել թանգարանի՝ ի հիշատակ 1993թ. Սվազում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհված ալևիների:

Թվարկված կետերը հիմնականում արտահայտում են Թուրքիայում բնակվող բոլոր ալևիների պահանջները պետությունից, սակայն դրանց սահմանման հետ կապված ալևիական հեղինակավոր միությունների միջև առկա են լուրջ խնդիրներ, որոնք ավելի են դժվարացնում բոլոր ալևի ակտիվիստների պայքարը միասնական ճակատով:

 - Այնուամենայնիվ, ԱԶԿ-ական կառավարությունը, թեև՝ ոչ արդյունավետ, սակայն փորձում է քայլեր ձեռնարկել ալևիների խնդիրների լուծմանն ուղղված՝ ցանկանալով սիրաշահել ալևիներին, ովքեր վերջին տարիներին ավելի են ակտիվացրել շարժումը: Այս քայլերը նաև ուղղված են ԵՄ ինտեգրման ճանապարհը բռնած Թուրքիայի հեղինակությունը եվրոպական կառույցների աչքում բարձրացնելուն: Սակայն ալևիական խնդիրների շուրջ 2009թ. կազմակերպված

քննարկումների ծրագիրը, կարող ենք ասել, ձախողվեց՝ որևէ լուծում չտալով ալիների խնդիրներին:

- Ալիական շարժումը արդի փուլում շարունակվում է ավելի լայն թափով և դեռ երկար ժամանակ կմնա քաղաքագետների, գիտական աշխարհի և հետազոտողների ուշադրության կենտրոնում, որովհետև ալիական ինքնության համար շարժումը թուրքական քաղաքական բեմահարթակում տեղի ունեցող իրադարձությունների շարքում տարեցտարի ծավալվում և ավելի մեծ կարևորություն է ստանում:

Ատենախոսության **ՀԱՎԵԼՎԱԾՆ** ընդգրկում է Թուրքիայի քաղաքական քարտեզը, որտեղ ներկայացվում են վիլայեթները՝ ըստ բնակվող ալիների մոտավոր թվաքանակի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ալկիները և ուրբանիզացիայի գործընթացը Թուրքիայում 1960-ական թթ., Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, Երևան, 2011, էջ 298-306:
2. Թուրքիայում ալկիների խնդրի շուրջ, Մերձավոր Արևելք, հ. VI, Երևան, 2009, էջ 133-139:
3. Հայ հետազոտողները ալկիների մասին, Մերձավոր Արևելք, հ. VII, Երևան, 2011, էջ 169-174:
4. Ալկիների պայքարը Թուրքիայում արդի փուլում, 21-րդ դար, հ. 3 (37), Երևան, 2011, էջ 33-45:
5. Ալկիները Թուրքիայում 1920-1930-ական թվականներին, Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 3 (631), Երևան, 2011, էջ 74-81
6. Ալկիական կազմակերպությունների հիմնումը և գործունեությունը Եվրոպայում 1960-2000-ական թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVIII, Երևան, 2011, էջ 171-187:

АРУТЮНЯН ВАРДАН АШОТОВИЧ

ПРОБЛЕМА АЛЕВИЗМА В РЕСПУБЛИКАНСКОЙ ТУРЦИИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.

Защита состоится 5 Декабря 2011г., в 15:30 на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: г. Ереван, 0019, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена исследованию проблем алевитов в период республиканской Турции (с 1923г. по настоящее время).

Всестороннее изучение вопросов, касающихся участия алевитов в общественно – политической жизни страны, имеет важное научное значение для глубокого понимания и объективной оценки тех внутривнутриполитических событий и процессов, которые происходили в Турецкой Республике в указанный период времени и продолжают вплоть до сегодняшнего дня.

Особенно важное значение имеет изучение процесса активизации и анализа алевитского движения в последние два десятилетия, когда алевитское общество начало объединяться вокруг ряда авторитетных алевитских организаций, требующих от правительства признания прав алевитов и алевизм как религию, отличающуюся от ислама. Это движение начинает играть роль, которая способна повлиять на контексты многих внутренних и внешних политических процессов и даже изменить их, как например, отношения между Европейским Союзом и Турцией. На этот процесс оказали большое влияние европейские алевитские организации, которые были созданы вследствие эмиграции алевитов из восточного и юго-восточного районов Турции в Европу в середине 20-ого столетия.

Целями исследуемой работы являются:

- изложение краткой истории алевитов с периода формирования алевизма до конца существования Османской империи;
- выявление роли алевитов в период националистической борьбы в Турции, возглавляемой Мустафой Кемалем, а также причин нейтральности курдов-алевинов во время курдских восстаний против кемалистского правительства в 1920-30-ые гг.;
- всесторонний анализ отношений алевитов к формированию многопартийного правительства и развитию исламского фундаментализма в 1950-ые гг., вследствие чего они стали отдавать предпочтение левым политическим силам;

- исследование влияния урбанизации на некоторые принципиальные религиозные концепции алевизма;
- выявление причин кровавых столкновений между алевитами и суннитами во второй половине 1970-х годов;
- анализ изменения отношения турецкого правительства к алевитам после переворота 1980г. в контексте “турецко-исламского синтеза”;
- изучение предпосылок процесса формирования алевитского движения, причин объединения алевитов на базе осознания алевитской идентичности, а также изучение требований, предъявленных турецкому правительству;
- изучение требований алевитских организаций, предъявленных турецкому правительству, и шаги правительства, направленные на их решение;
- исследование последнего этапа алевитского движения в Турции;
- изучение вопросов формирования и развития алевитских организаций в европейских странах, их роль и значение в алевитском движении.

Хотя в историографии освещались отдельные аспекты проблем алевитов в Турции, данная диссертационная работа по своему содержанию и структуре является первым исследованием в данной области не только в армянской, но и в зарубежной историографии.

Методологической основой работы является сравнительно-сопоставительное исследование фактов и анализ разнообразных вопросов, точек зрения и источников, касающихся алевитской истории на территории республиканской Турции и современного движения алевитов в Европе.

Диссертационная работа включает в себя введение, основную часть, состоящую из трех глав, которые подразделяются на параграфы, заключение, приложение, список использованных источников и литературы.

Во ВВЕДЕНИИ обосновывается актуальность выбора темы исследования, определяются его цели, задачи и научная новизна, характеризуется методологическая основа, практическое значение и хронологические рамки работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

В первой главе диссертационной работы, озаглавленной “АЛЕВИТЫ В ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКЕ В 1920-30-ЫЕ ГГ.” представлена проблема кызылбашских восстаний в период Османской империи и вопрос о происхождении алевизма. Подробно рассматриваются действия алевитов в период националистической борьбы во главе с Мустафой Кемалем. Алевиты до провозглашения Турецкой республики всегда жили закрыто, используя исламский институт “такия”, скрывая свою религиозную принадлежность и выдавая себя за мусульман. В период борьбы националистических сил у алевитов появляется надежда, что, одержав победу, кемалисты построят светское государство, где они и сунниты будут равны, поэтому курды-алеви́ты во время курдских восстаний в Турции в 1920-ые годы придерживались

нейтралитета. Однако события в Дерсиме в 1937-1938 гг. доказали им, что в стране нет равенства с суннитами, и продолжали скрытый образ жизни.

Вторая глава диссертационной работы, озаглавленная “АЛЕВИТЫ В ТУРЦИИ В 1940-80-ЫЕ ГГ.”, посвящена изучению алевитских проблем в период многопартийной системы в стране, когда многие алевиты начинают симпатизировать левым политическим силам. Мы обратили также особое внимание на тот период, когда в Турции происходили кровавые столкновения между алевитами и суннитами во второй половине 1970-ых годов. После переворота в 1980г. меняется отношение правительства к алевитам и начинается период идеологических давлений в контексте “турецко-исламского синтеза”. В данной главе также исследуется период начала процессов урбанизации страны (1960-ые годы) и эмиграции алевитов в европейские страны, особенно в Германию. Эти процессы во многом изменили некоторые принципиальные концепции алевизма, которым в результате уже не придает значения новое поколение алевитов, особенно молодежь, живущая в больших городах Турции.

Третья глава диссертационной работы озаглавлена “ФОРМИРОВАНИЕ ИДЕНТИЧНОСТИ АЛЕВИТОВ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ”. В ней подробно изучаются предпосылки формирования алевитского движения в последние два десятилетия. Этому процессу особенно “помогли” погромы против алевитов в Свазе и Стамбуле. В течение нескольких лет алевиты сформировали организации, предъявляющие их требования государству. Последнее, в свою очередь, для решения проблем алевитов предприняло некоторые шаги, оказавшиеся безрезультативными. В этом процессе алевитам помогали единоверцы из Европы, которые принимали активное участие, а иногда и возглавляли движение. В главе исследуется также процесс формирования алевитских организаций в европейских странах, в частности, в Германии.

В ЗАКЛЮЧЕНИИ представлены основные выводы по рассмотренным проблемам. В частности, указано, что впервые в истории республиканской Турции алевиты начали движение с целью защиты своих политических и религиозных прав. Нами сделан вывод о том, что сегодня как в Турции, так и в европейских странах движение алевитов не только продолжается, но и усиливается с каждым днем.

В ПРИЛОЖЕНИИ представлена политическая карта Турции, на которой выделены районы проживания алевитов.

VARDAN A. HARUTYUNYAN

THE ISSUE OF ALEVISM IN REPUBLICAN TURKEY

The Dissertation is submitted for pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 15:30 on December 5, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS of RA. Address: Yerevan, 0019, 24/4 Marshal Baghramian ave.

SUMMARY

The dissertation is devoted to the research of the problem of Alevis in Turkey during the Republican period.

The comprehensive research of the issues, concerning Alevis during the given period has important scientific meaning for the deeper understanding and objective assessment of some events of the domestic policy and processes in the Republic of Turkey, since these processes continue until nowadays.

The research of the process of activation of Alevi movement in the last two decades is of special significance, as the Alevi society has begun to gather around some authoritative organizations. These unions demand from the government recognition of Alevi rights and Alevism as a religion independent from Islam. The Alevi movement begins to play a role, which may change or influence on contexts of many domestic and foreign political processes, as, for example, relations between European Union and Turkey. The role of European Alevi organizations in the stimulation of the movement process is great. These organizations were formed as a result of immigration of Alevis to Europe from eastern and south-eastern region of Turkey in the middle of 1920s.

The objectives of the dissertation are:

- briefly introduce the history of Alevis beginning from the formation of Alevism until the end of existence of the Ottoman Empire;
- analysis of the role of Alevis during the national movement led by Mustafa Kemal in Turkey and the reason of Kurd-Alevis being neutral during the Kurdish rebellion against Kemal's government in 1920-30s;
- comprehensive research of the position that Alevis have had towards the process of the formation of multiparty government and the deepening of Islamic fundamentalism in 1950s., when Alevis began to sympathize the political left;
- research of influence of the urbanization on some basic concepts of Alevism;

- identification of the reasons of bloody clashes between Alevi and Sunnis in the second half of 1970s;
- analysis of the change of position of Turkish government towards Alevi in the context of “Turkish-Islamic synthesis” after the coup d'etat in 1980;
- comprehensive research of the background of the process of formation of Alevi movement, reasons of Alevi unification around the Alevi identity and demands presented to the Turkish government;
- present the steps of the Alevi organizations for implementation of their demands as well as the steps of the government aimed at solving the problems of Alevi in Turkey;
- analysis of the modern phase of Alevi movement in Turkey;
- research of the formation and activities of Alevi organizations in European countries, their role and the importance in Alevi movement.

Certain historiographers and researchers covered separate aspects of the Alevi problems in Turkey, but the dissertation introduced is the first research of its kind not only in Armenian, but also in the foreign historiography by its content and structure.

The dissertation includes an introduction, a main body, consisting of three chapters, which are divided into several paragraphs, a conclusion, appendix and a list of the references and literature.

The relevance of the research, goals, challenges and scientific innovations are determined; practical significance and chronological periods of the work are characterized and short summary of referred historians and literature are given in the INTRODUCTION.

The first chapter of the dissertation is entitled “ALEVIS IN THE TURKISH REPUBLIC IN 1920-30s”, where the problem of Kizilbash rebellion in the period of Ottoman Empire and the issue of the origin of Alevism as a religion are introduced. The activities of Alevi during the nationalistic struggle led by Mustafa Kemal are elaborated. Alevi always lived by the secret way of life hiding their religious identity and using Islamic tenet of “taqiya” until the declaration of the Republic of Turkey. But hope was born among Alevi during the nationalistic struggle, that the kemalists would build a secular state after the victory, where Alevi and Sunnis would be equal. And that is why the Kurd-Alevi kept neutrality during the Kurdish rebellion in Turkey in 1920s. But the developments in Dersim in the years 1937-1938 proved them the absence of equality with Sunnis in the country and the Alevi continued to live in the secret way of life.

The second chapter of the dissertation is entitled “ALEVIS IN TURKEY IN 1940-80s” and is devoted to the research of the problem of Alevi during the period of multiparty system in the country, when many Alevi began to sympathize political parties in left. Analyzing the period, when bloody clashes took place between Alevi and Sunnis in the second half of 1970s is also important. A few years later, after the coup d'etat in 1980, the government changed its position towards Alevi in the context of “Turkish-Islamic synthesis” and began to put ideological pressures on them. This chapter introduces the research of the period, when

the processes of urbanization and emigration to European countries, especially to Germany, began in Turkey in 1960s. These processes changed certain basic concepts of Alevism significantly. The new generation of Alevis, especially the youth living in big cities, already does not give significance to these concepts.

The third and the last chapter of the dissertation is entitled “FORMATION OF THE IDENTITY OF ALEVIS IN THE MODERN PHASE”, where background of formation of Alevi movement in the last two decades is comprehensively researched. The pogroms in Sivas and Istanbul stimulated this process a lot. And Alevis set up organizations and unities within a couple of years declaring their demands from the state. The latter in its turn took steps to solve the problems of Alevis, but still in vain. In the process of activation of the movement Alevis were supported by the coreligionists from Europe, who are actively involved and sometimes even lead the movement. In the chapter the process of formation of Alevi organizations and their activities in the European countries, particularly in Germany is also described and analyzed.

The main conclusions of the issues considered are drawn in the CONCLUSION of the dissertation. It is particularly noted that Alevis began a movement the first time in the history of the Republican Turkey in purpose of preserving their political and religious rights. The Alevi movement is still continuing and becoming more powerful in Turkey and in the European countries today.

The APPENDIX presents the political map of Turkey, which indicates the inhabitation of Alevis by provinces.

A handwritten signature in black ink, consisting of several fluid, overlapping strokes that form a stylized, cursive name.